# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Իրտիգ» ՍՊԸ-ի միջև 2025թ. օգոստոսի 4-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/8/2 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «08» 04 2026թ.

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը**, ի դեմս գործադիր տնօրեն **Սարգիս Բաղինյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ***«Իրտիգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,*** մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1869-Ն որոշման առաջին կետի երկրորդ ենթակետի պահանջները, ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը և Կողմերի միջև ***2025թ. օգոստոսի 4-ին կնքված «ՀՀ Արմավիրի մարզի Լենուղու բժշկական ամբուլատորիայի կառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների*** պետական գնման **N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/8/2** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.5 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **8 468 079 (ութ միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար յոթանասունինը)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից **2 828 079 (երկու միլիոն ութ հարյուր քսանութ հազար յոթանասունինը)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակապվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900011061281
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
**Սարգիս Բաղինյան**

/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ԻՐՏԻԳ» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ ք. Վանաձոր,
Տիգրան Մեծի 40/28
ՀՎՀՀ՝ 06954405
Հ/հ՝ 220053335679000
Բանկ՝ «Ակբա բանկ» ԲԲԸ Լոռի մ/ճ
Տնօրեն
**Տիգրան Պողոսյան**

/ստորագրություն/

Կ.Տ.